

VISA ՄԻՋԱՉԱՊՅԻՆ ԿՃԱՐԱՅԻՆ ՀԱՍՎԱՐԳԻ VISA ELECTRON, VISA CLASSIC, VISA GOLD
ՊԼԱՍՏԻԿ ՔԱՐՏԵՐԻ ՍՊԱՍԱՐԿԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅՑՆԵՐ

1.1. VISA ELECTRON, VISA CLASSIC, VISA GOLD (այսուհետ՝ «Քարտ») հանդիսանում են VISA միջազգային վճարային համակարգի «ՅուՆիբանկ» ՓԲԸ (այսուհետև՝ «Բանկ») կողմից թողարկված բանկային պլաստիկ քարտեր, որոնք հանդիսանում են 3-րդ օրենսդրությամբ, Visa միջազգային վճարային համակարգի նորմատիվ ակտերով և կանոններով, ինչպես նաև սույն Կանոններով կարգավորվող անկանխիկ հաշվարկների միջոց:
1.2. Քարտը հանդիսանում է Բանկի սեփականությունը:

2. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՍՎԱՅԻՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ

2.1. Սույն Կանոնների մեկնաբանման իմաստով սույն Կանոններում օգտագործված ներքոհիշյալ հասկացությունները պետք է մեկնաբանվեն հետևյալ կերպ:
«Visa միջազգային վճարային համակարգ» նշանակում է աշխարհում «Visa» լոգոտիպով պլաստիկ քարտերով գործառնություններ իրականացնելու համար գործող միասնական վճարային համակարգ:
«Բանկային Քարտ» Բանկային քարտը կանխիկ դրամը փոխարինող ժամանակակից միջոց է, որը թույլ է տալիս արագ և անվտանգ կերպով իրականացնել ֆինանսական գործառնություններ: Քարտը անհատակա-նացված է անվանագրված է:

«Միասնական վճարում» Բանկի կողմից Քարտապանին ժամանակավոր օգտագործված տրամադրված, սակայն Բանկի սեփականությունը հանդիսացող պլաստիկ քարտ, որի միջոցով Քարտապանը կարող է Քարտային Հաշվում առկա գումարների շրջանակում «Visa» վճարային համակարգի սպասարկման կետերում կատարել վճարումներ ապրանքների և ծառայությունների դիմաց և ստանալ կանխիկ դրամ:

«Կցված քարտ (LINKED CARD)» նշանակում է Բանկի կողմից Հիմնական քարտապանի դիմումի հիման վրա իր կողմից նշված անձի (անձանց) անունով նույն քարտային Հաշվով գործառնություններ իրականացնելու պայմանով լրացուցիչ (հիմնական քարտին կից) Քարտի տրամադրում: Ընդ որում լրացուցիչ/կցված Քարտով կատարվող գործառնությունների ռիսկը և պարտավորությունները ստանձնում է Հիմնական Քարտապանը: Հիմնական Քարտապանը կարող է սահմանել կցված Քարտի (քարտերի) Վճարային Սահմանաչափ, որի սահմաններում կցված Քարտի Քարտապանը կարող է կատարել վճարումներ ապրանքների և ծառայությունների դիմաց և ստանալ կանխիկ դրամ:

«Քարտային Հաշիվ (այսուհետ՝ «Հաշիվ»)» նշանակում է պլաստիկ քարտով սպասարկվող բանկային հաշիվ որի բացման, սպասարկման և փակման կարգավիճակը որոշվում է սույն Կանոններով, «Visa» միջազգային վճարային համակարգի պլաստիկ քարտերի տրամադրման և սպասարկման պայմանագրի» (այսուհետև՝ «Պայմանագիր») պայմաններով:

«Հաշվի վարկավորում (օվերդրաֆտ)» Բանկի կողմից միակողմանիորեն սահմանված և թույլատրելի չափերով Քարտապանին պատկանող սեփական դրամական միջոցներից բացի Հաշվին այլ հավելյալ գումարի տրամադրումը, որը կարող է օգտագործվել և տնօրինվել Քարտապանի կողմից Պայմանագրի պայմանների համաձայն: Բանկի կողմից հաշվում տրամադրված/վարկավորված դրամական միջոցները Քարտապանի կողմից փաստացի իր կամ երրորդ անձի օգտին դուրս գրելու դեպքում Բանկի և Քարտապանի միջև ծագում են իրավունքներ և պարտականություններ, որոնք որոշվում են 3-րդ Քաղաքացիական օրենսգրքի փոխառության (46 գլուխ) ու վարկի (47 գլուխ) կանոններով, եթե այլ բան նախատեսված չէ սույն Կանոնների և Պայմանագրի պայմաններով: Հաշիվը համարվում է վարկավորված այն պահից սկսած, երբ Քարտապանի պահանջով նրան տրամադրվում է ավելի մեծ գումար, քան Հաշվում առկա սեփական միջոցները: Այդ դեպքում կողմերը ձեռք են բերում սույն Կանոններով և Պայմանագրով նախատեսված իրավունքները և պարտականությունները: Հաշիվը վարկավորելու կապակցությամբ սույն Կանոններով և Պայմանագրով սահմանված իրավունքները և պարտականությունները դադարում են այն պահից սկսած, երբ Քարտապանի կամ որևէ երրորդ անձի կողմից Քարտապանի Հաշվի օգտին կատարվում է դրամական միջոցների մուտքագրում վարկավորված գումարի կամ դրանից ավելի մեծ գումարի չափով:
«Վճարային սահմանաչափ» նշանակում է Հաշվում առկա, այն է Քարտապանի սեփական միջոցների և Բանկի կողմից հաշվի վարկավորման արդյունքում ձևավորված միջոցների առավելագույն գումար, որի սահմաններում Քարտապանը կարող է կատարել վճարումներ և ստանալ կանխիկ միջոցներ Քարտի օգտագործմամբ:

«Միասնական նույնկանգամ համար (PIN կոդ)» նշանակում է սովորաբար չորս նիշից բաղկացած անհատապես նույնականացնող թվային ծածկագիր, որը համաձայն 3-րդ Քաղաքացիական օրենսգրքի 296 հոդվածի 3 կետի կողմերի փոխադարձ համաձայնությամբ հանդիսանում է Քարտապանի էլեկտրոնային թվային ստորագրություն, և որը միաժամանակ հանդիսանում է պարտադիր վավերապայման քարտային հաշվից դրամական միջոցներ դուրս գրելու /բանկոմատների (ATM) միջոցով կանխիկ գումարի ստացում/ համար: POS տերմինալների միջոցով գործառնություններ իրականացնելիս կարող է պահանջվել մուտքագրել PIN թվային կոդ,ինչպես նաև Քարտապանից POS-տերմինալը սպասարկելու լիազորություն ունեցող անձի կողմից անհրաժեշտության դեպքում կարող է պահանջվել անձը հաստատող փաստաթղթի ներկայացում կամ որևէ այլ փաստաթղթերի լրացում:

«Բանկոմատ կամ ATM» նշանակում է Քարտով կանխիկ միջոցներ ստանալու համար նախատեսված դրամական գործառնություններ իրականացնող ավտոմատ համակարգչային սարք, որով գործառնություններ կարող են իրականացվել միայն Քարտի փաստացի առկայության դեպքում Քարտին շնորհիվ PIN թվային կոդի մուտքագրման պայմանով:

«POS տերմինալ» նշանակում է դրամական գործառնություններ /կանխիկ դրամի ստացում, ապրանքների և ծառայությունների համար վճարում/ իրականացնելու համար նախատեսված էլեկտրամեխանիկական սարք, որը ավտոմատ կատարում է Քարտով իրականացվող գործառնության հավաստագրումը:

«Քարտի սպասարկման տարեկան վաճառ» նշանակում է տվյալ Քարտը և Հաշիվը սպասարկելու համար միանվագ գանձվող տարեկան վճար:

«Քարտային Հաշվի Բացում» նշանակում է տվյալ քարտապանի համար թողարկված քարտի սպասարկման նպատակով բանկային հաշվի բացում:

«Նախնական դեպոզիտի Չափը» նշանակում է Բանկի կողմից Սակագներով սահմանված դրամական միջոցների այն նվազագույն չափը, որը ի սկզբանե մուտքագրելու դեպքում միայն Քարտապանին կարող է տրամադրվել Քարտ և բացվել Քարտային Հաշիվ:

«Քարտային Հաշվի Չնվազող Մնացորդ» նշանակում է Քարտային Հաշվում առկա, Քարտապանի անձնական դրամական միջոցների այն ստորին չափը, որը պահանջվում է Բանկի կողմից տվյալ Քարտի տեսակի և Քարտային Հաշվի սպասարկման նպատակով:

«Հաշվի Մնացորդի վրա Հաշվարկվող Տարեկան Տոկոսադրույք» նշանակում է տվյալ Քարտապանի Քարտային Հաշվում փաստացի առկա սեփական դրամական միջոցների դիմաց Բանկի կողմից վճարվող տոկոսների տարեկան չափը: Տոկոսների հաշվարկում և վճարման համախառնությունը սահմանվում է տվյալ բանկի կողմից Սակագների և/կամ Պայմանագրի համաձայն:

«Քարտի կորստի կամ վնասման դեպքում նոր քարտի տրամադրում» նշանակում է թողարկված Քարտը Քարտապանի մեղքով կորցնելու կամ վնասելու հետևանքով այն ոչ պիտանի դարձնելու դեպքում Քարտապանի դիմումի հիման վրա վերջինիս համար նոր Քարտի թողարկում և տրամադրում:

«PIN կոդի փոփոխում» նշանակում է Քարտապանի դիմումի հիման վրա նրա անհատական նույնականացման համարի /PIN կոդի/ տրամադրում: Ընդ որում, PIN կոդի փոփոխման դեպքում միաժամանակ պետք է իրականացվի նոր Քարտի տրամադրում:

«Կորցած Քարտի Տեղադրումը STOP-List-ում» նշանակում է Քարտապանի կողմից Քարտը կորցնելու դեպքում Քարտային Հաշվի սպասարկումը Բանկի կողմից սառեցնելու, քարտապանի դիմումի հիման վրա տվյալ քարտը հատուկ, սառեցված քարտային հաշվիների ցուցակում / STOP-List-ում/ տեղադրելու և տվյալ Քարտով գործառնություններ դադարացնելու գործընթաց:

«Հաշվից քաղվածքի տրամադրում» նշանակում է Քարտով կատարված գործառնությունների վերաբերյալ ամենամսյա հաշվետվության տրամադրում: Բանկի կողմից Քաղվածքների տրամադրվում են ամիսը մեկ անգամ:

«Քարտով անկանխիկ գործարքների իրականացում» նշանակում է Քարտապանի կողմից իր Քարտը օգտագործելու միջոցով Քարտային Հաշվից բանկային փոխանցումների իրականացում կամ «Visa» միջազգային վճարային համակարգում ցանկացած բանկին պատկանող և ցանկացած առևտրային կետերում սպասարկվող POS տերմինալներում ապրանքների և ծառայությունների դիմաց վճարումների իրականացում:

«Նվառի սպասարկման կետեր (այսուհետև՝ «ԱՎԿ»)» նշանակում է առևտրի և սպասարկման այն կետերը, որտեղ ապրանքների և ծառայությունների դիմաց որպես վճարման միջոց ընդունվում են «Visa» միջազգային վճարային համակարգի Քարտերը:

«Օրական կանխիկացման գործարքների ընդհանուր գումարը» սահմանում է ժամը 00:00:01-ից մինչև 23:59:59 (երևանի ժամանակով) ընկած ժամանակահատվածում Քարտապանի կողմից կանխիկացման գործարքների ընդհանուր գումարը: Այն սահմանվում է Բանկի կողմից և նշվում անկազմեցում, սակայն կարող է փոփոխվել ըստ Քարտապանի ցանկության՝ համաձայնորեն ավելացնելով Քարտային Հաշվի Չնվազող Մնացորդը:

«Օրական կանխիկացման գործարքների ընդհանուր քանակը» սահմանում է ժամը 00:00:01-ից մինչև 23:59:59 (երևանի ժամանակով) ընկած ժամանակահատվածում Քարտապանի կողմից կանխիկացման գործարքների ընդհանուր քանակը:

3. ՔԱՐՏԻ ՏՐԱՍԱՐԳՈՒՄ

3.1. Հանձնարողը ծանոթանալով ՅուՆիբանկի կողմից հաստատված թողարկվող քարտերի տեսակներին, սպասարկման կանոններին և սակագներին և ընտրելով քարտի տեսակը՝

- Անձնագրով ներկայանում է Բանկ
- Լրացնում է ԴԻՄՈՒՄ համապատասխան Բանկային քարտի տեսակի տրամադրման համար
- Բանկի Սակագներով սահմանված չափերով Հաշվին մուտքագրում է (կանխիկ կամ անկանխիկ) անհրաժեշտ դրամական միջոցներ (քարտի թողարկման վճար, հաշվի սպասարկման տարեկան վճար, նախնական դեպոզիտի գումար և այլն):
- Երեք աշխատանքային օրվա ընթացքում Բանկը կայացնում է որոշում քարտ տրամադրելու վերաբերյալ
- Բանկի կողմից դրական որոշում կայացնելու դեպքում կնքվում է Պայմանագիր Քարտի տրամադրման և սպասարկման վերաբերյալ
- Պայմանագիրը կնքում օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատրաստվում և միայն Քարտապանին է տրամադրվում քարտը և PIN-կոդը
- Քարտը ստանալուց Քարտապանը պարտավոր է ստորագրել Քարտի դարձերեսի վրա նախատեսված հատուկ դաշտում և

Բանկի կողմից ներկայացված համապատասխան փաստաթղթերում Քարտը և PIN - կոդը ստանալու վերաբերյալ

3.2. Քարտում ամրագրված ստորագրության բացակայությունը կամ ստորագրության նմուշի հետ ստորագրության չհամընկնելը Քարտը չսպասարկելու համար օրինական հիմք է հանդիսանում: Նման Քարտը կարող է բռնագրավվել առանց որևէ անձի նկատմամբ քարտի բռնագրավման հետ կապված հատուցում պահանջելու իրավունքի:

3.3. Յուրաքանչյուր Քարտի համար անհատապես շնորհվում է ԱՆՀ (PIN կոդ): Նշված կոդը անհրաժեշտ է Քարտը բանկում ստանալու օգտագործելու համար: PIN - կոդի մուտքագրումը իրականացվում է տվյալ բանկում արտադրողի կողմից համապատասխան գրառում հայտնվելուց հետո: Երեք անգամ անընդմեջ PIN-կոդի սխալ մուտքագրման դեպքում Քարտը բռնագրավվում է կամ դադարեցվում է նրա գործողությունը: Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Քարտը բռնագրավելու հետ կապված առևտրային կազմակերպության կամ այլ բանկերի բռնագրավվում իրականացնող աշխատակիցների գործողությունների համար:

3.4. Քարտապանը պարտավոր է զաղտնի պահել PIN-կոդը և ոչ մի պարագայում չհայտնել այն երրորդ անձին:

4. ՔԱՐՏԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

4.1. Քարտը վավեր է մինչև Քարտում նշված ամսվա վերջին օրը:

4.2. Քարտի գործողության ժամկետը լրանալու պահից Քարտը ավտոմատ կարգով երկարաձգվում է նույն ժամկետով: Քարտի գործողության ժամկետը իրականացվում է Պայմանագրի դրույթների համաձայն:

5. ՔԱՐՏԻ ՕՍՏԱԳՈՐԾՈՒՄ

5.1. Քարտը իրավունք ունի օգտագործել բացառապես նրա Քարտապանը:

5.2. Քարտապանը իրավունք չունի փոխանցել Քարտը և PIN կոդը որևէ պարագայում որևէ անձի կողմից օգտագործման նպատակով: Քարտապանի կողմից Քարտը և PIN կոդը որևէ այլ անձի օգտագործման փոխանցելու դեպքում Քարտով կատարված գործառնությունների (կանխիկ/անկանխիկ) գումարները անառարկելի կարգով դառնում են Քարտապանի հաշվին:

5.3. Առևտրային/սպասարկման կետեր սպասարկում են Visa վճարային համակարգի Քարտերը համակարգի սպասարկող և բանկերի կողմից սահմանված պայմաններով և կարգով:

5.4. Քարտի միջոցով ապրանքների/ծառայությունների դիմաց վճարելու կամ կանխիկ գումար ստանալու սպասարկման կետերը կատարում են հավաստագրման հարցում Քարտային հաշվի վրա տվյալ գումարի չափի առկայության վերաբերյալ: Գործարքը իրականացվում է միայն այն դեպքում, երբ սպասարկման կետը ստանում է հավաստագրման հաստատումը և քարտապանը ստորագրում է չեկի/սլիպի վրա: Քարտապանի հաշվում սառեցվում է համապատասխան գումար և վճարային սահմանաչափը նվազում է կատարվող գործարքի գումարի չափով:

5.5. Քարտի միջոցով գործարք իրականացնելուց հետո Բանկը իրավասու է հաշվից ելքագրել Քարտապանի միջոցները կատարված գործարքի գումարի չափով: Քարտով սպասարկվելու համար Բանկի կողմից գանձվում են Բանկի Սակագներով նախատեսված միջնորդավճարներ: Այլ Բանկերի սպասարկման կետերում սպասարկվելիս կարող է գանձվի լրացուցիչ միջնորդավճար, որի չափը սահմանվում է անմիջապես այն բանկի կողմից, որին պատկանում է տվյալ սպասարկման կետը:

5.6. Քարտի օգտագործումը Քարտի արժույթից տարբերվող այլ արժույթով իրականացվում է Քարտի արժույթի համար նախատեսված նույն պայմաններով և ժամկետներում: Սակայն տվյալ արժույթի փոխարկումը Քարտի արժույթով իրականացվում է համաձայն Պայմանագրի պայմանների:

5.7. Քարտապանը Քարտի օգտագործմամբ վճարում իրականացնելիս կամ կանխիկ միջոցներ ստանալիս պարտավոր է ստորագրել համապատասխան չեկ/սլիպ, համոզվելով այդ փաստաթղթերում նշված գումարի ճշտության, փաստացի կատարված վճարման կամ ստացված կանխիկ միջոցների գումարի հետ: Քարտապանը իրավունք չունի ստորագրել վերը նշված այնպիսի չեկ/սլիպ, որոնցում նշված չէ գործառնության գումարը: Առևտրային/սպասարկման կետի կամ բանկի գանձապահի կողմից իրականացվում է այդ փաստաթղթի և Քարտի վրա Քարտապանի ստորագրությունների համեմատում: Սլիպի և Քարտի վրա նշված ստորագրությունների համեմատելիության բացակայության դեպքում գանձապահը իրավունք ունի անառարկելի կարգով բռնագրավել Քարտը առանց նախնական զգուշացման:

5.8. Քարտապանը պարտավոր է պահպանել Քարտով գործառնություններ կատարված բոլոր փաստաթղթերը և Բանկի պահանջով վիճելի հարցերի առաջացման դեպքում տրամադրել դրանք Բանկին:

5.9. Հաշվին դրամական միջոցների մուտքագրումը կարող է իրականացվել կանխիկ կամ անկանխիկ եղանակով Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում:

5.10. Բանկը պատասխանատվություն չի կրում համապատասխան ԱՍԿ-ի կողմից Քարտապանին տրամադրվող ապրանքի կամ ծառայության համար: Եթե գնված ապրանքը վերադարձվում է ամբողջությամբ կամ մասնակիորեն, ապա Քարտապանը կարող է ԱՍԿ-ից դրամական միջոցների վերադարձ պահանջել միայն Բանկում իր հաշվի վրա կրեդիտագրելու եղանակով:

5.11. Այլ բանկերի կանխիկացման կետերում (բանկոմատներ, POS-տերմինալներ) կանխիկացման կամ արտարժույթի փոխարկման համար կարող են գանձվել հավելյալ միջնորդավճարներ, ինչի մասին սակայն պարզիր պետք է նշված լինի կանխիկացման կետում: Խնդրում ենք լինել ուշադիր:

6. ՔԱՐՏԻ ԿՈՐՈՒՄՍ

6.1. Քարտապանը պարտավոր է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները Քարտի կորուստը կամ անօրինական օգտագործումը կանխելու նպատակով: Քարտի կորուստ է դիտվում Քարտը կորցնելը, յուրացումը, բռնագրավվումը:

6.2. Քարտը կորցնելու դեպքում Քարտապանը պարտավոր է Բանկին անհապաղ այդ մասին տեղեկացնել, (37410) 555-140 ֆաքսով, unibank@unibank.am էլեկտրոնային փոստի հասցեով կամ գանգահարել հետևյալ հեռախոսահամարներով՝ 85-80; (37410) 555 385; 44-03-80 քարտի գործողությունները դադարեցնելու նպատակով: Ընդ որում գրավոր կամ բանավոր ծանուցումը պետք է զուգորդվի Քարտապանի կողմից դիմումում նշված զաղտնաբառի նշումով, իսկ գրավոր և/կամ ֆաքսով տրված ծանուցումը՝ նաև Քարտապանի ստորագրությամբ: Բացի դրանից Քարտապանը ծանուցման պետք է բանկին հայտնի նաև Քարտի համարը և գործողության ժամկետը:

6.3. Քարտապանի կողմից բանավոր երանակով ցանկացած ծանուցում Քարտի կորստի մասին պետք է հաստատվի Քարտապանի կողմից Բանկին գրավոր ներկայացված դիմումում Բանկին բանավոր ծանուցում տրամադրելու պահից 24 ժամվա ընթացքում:

6.4. Քարտապանի կողմից Բանկին ուղղված ծանուցման մեջ ամենայն մանրամասնությամբ պետք է նշված լինեն Քարտի կորստի կամ գողության մասին բոլոր հանգամանքները, ինչպես նաև այն տեղեկությունները, որոնք հայտնի են դարձել Քարտապանին Քարտը անօրինական կարգով օգտագործելու վերաբերյալ: Բանկը իրավունք է վերապահում իրեն ստացված տեղեկությունները տրամադրել իրավասու մարմինների տիրապետմանը՝ անհրաժեշտ հետաքննություն իրականացնելու նպատակով: Քարտապանը իր հեթոքի պետք է ձեռնարկի բոլոր անհրաժեշտ միջոցները, որպեսզի օժանդակի կորստի ենթարկված Քարտը հետախուզել և հայտնաբերել:

6.5. Քարտը կորստի ենթարկելու, հափշտակելու, կամ բռնագրավելու մասին ծանուցման անսափով և ժամանակ է համարվում Բանկի կողմից Քարտապանի ստորագրությամբ վավերացված ծանուցումը փաստացի ստանալու անսափով և ժամանակը:

6.7. Քարտապանի կողմից ուղղված համապատասխան ծանուցումը ստանալուց հետո Քարտապանի պատասխանատվությունը Քարտի հետագա օգտագործման համար Բանկի կողմից դադարեցվում է:

6.8. Քարտի կորուստի ենթարկելու կամ հափշտակված համարելու մասին նախկինում ծանուցված Քարտը հայտնաբերելու դեպքում Քարտապանը պարտավոր է Բանկին անհապաղ հայտնել այդ մասին և այնուհետև հետևել Բանկի կողմից տրված իրաժանգներին:

7. ԿՐԵԿԻ ՎԱՐՎԱՐՈՒՄ/ՕՎԵՐԴՐԱՅՏ

7.1. Հաշվի վարկավորումը (օվերդրաֆտ) կատարվում է ըստ Բանկում գործող կանոնակարգերի և սակագների:

7.2. Եթե տեղի է Բանկի կողմից չարտոնագրված հաշվի վարկավորումը (օվերլիմիտ), ապա տոկոսների հաշվառումը չարտոնագրված գումարի մասով կատարվում է այլ տոկոսադրույթով:

7.3. Օվերդրաֆտի ապահովագրման պայմանների փոփոխության դեպքում օվերդրաֆտի տոկոսը կարող է տարբերվել սակագներում նշված տոկոսադրույթից:

*Բանկը պատասխանատվություն չի կրում համակարգի այլ բանկերի կողմից գանձվող միջնորդավճարների և սպասարկման որակի համար: